

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### ԼՂՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից հաշվետու 2015թ. ընթացքում կատարած աշխատանքների մասին

ԼՂՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ղեկավարվելով «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, ինչպես նաև ԼՂՀ Կառավարության 133-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթներով՝ 2015թ. ընթացքում քննել է թվով մեկ գործ:

ԼՂՀ գնումների բողոքարկման խորհուրդի հանձնաժողովը, քննության առնելով 19.01.2015թ. ա/ձ Արմեն Խաչատրյանի կողմից ներկայացված բողոքը, որում նշվել է, որ ԼՂՀ Գյուղատնտեսության նախարարության կողմից 13.01.2015թ. անցկացված ԼՂՀ Գյուղատնտեսության նախարարության կարիքների համար թունանյութի ձեռքբերման «ԼՂՀ ԳՆ-ԲԸԱՊԶԲ 14/4» ընթացակարգի անցկացման ժամանակ չեն պահպանվել «Գնումների մասին» ԼՂՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջները, 23.01.2015թ. որոշմամբ բողոքը բավարարել է:

«Գնումների աջակցման կենտրոն»

ՊՈԱԿ-ի պետ



Լ.Ոսկանյան